# ԿԱ ՄԻ ՋՐՈՒՅՑ, ԹԵ...

## Առաջադրանքներ

**1.** Բառակազմական վերլուծությա՛ն ենթարկիր տրված բառերը:

Հոգևիճակ______________ ոսկեվարս ________________
գերեվարություն ___________ ագեվազ __________________
գինեվաճառ _____________ ոսկեվառ ________________

**2.** Կազմի՛ր նախադասություններ *եվրոպացի հովեկներ*, *գինեվաճառ Համո*, *ոսկեվարս աղջիկ*, *սևեռուն հայացք*, *ոսկևորված այգիներ* բառակապակցություններով:

**3.** Լրացրո՛ւ բաց թողնված տառը՝ *եվ* կամ *և*:

Հայկական նորաստեղծ գյուղը գտնվում էր ար_առ Արարատյան դաշտավայրում: Աչքդ շոյում էր հարթավայրի գեղեցկությունը: Խաղողի լայնածավալ ոսկ_ազ դաշտերի մոտ, մի բլրակի վրա կանգնած, ս_եռուն նայում ենք ոսկ_որված անծայրածիր անդաստաններին, ոսկ_առ հորիզոններին, գյուղը գոտ_որող գին_ետ այգիներին: Արեգակի ոսկ_արս ճառագայթները ոսկեզօծել են շուրջբոլորը, օդը լցված է սերկ_լենու բույրով: Մեղմ սյուքը շոյում է դժվարությամբ տեղայնացած դափն_արդերի, եղ_նիների ճյուղերը, սեթ_եթանքով հպվում, փարվում, ապա սլանում դեպի այգ_ետ գյուղերը՝ թեթ_ացնելու խեղդող տապը:

Օրվա այդ շոգ պահին դաշտում եռում է աշխատանքը: Տար_երջյան քննություններից հետո մեծերին օգնելու են եկել դպրոցականները: Ար_առ դեմքերով պատանիներն ու աղջիկները ոգ_որությամբ ու եռանդով են աշխատում: Գիտեն՝ ամառը շուտով հոգ_արք կապրի, և իրենք նորից դպրոցի ճամփան կբռնեն՝ հոգ_որ սնունդ ստանալու: Իսկ առայժմ բոլորը՝ կին թե տղամարդ, ալ_որ թե պատանի, պիտի աշխատեն: Այգ_ետ այգիներն առատ բերք են պարգ_ել: Գյուղացու ուշադրությունը բ_եռված է միայն հողին, որը կհատուցի ծանր աշխատանքի դիմաց՝ պարգ_ելով բարիքների առատություն:

**4.** Նախորդ վարժության տեքստից դո՛ւրս գրիր *եվ(և)*-ի արտասանությանը և գրությանը վերաբերող բառերը և դրանցով նոր պատմությո՛ւն կազմիր: